ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանկատանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ՀԱՏ ՏԱՐԻ ԹԻՒ 33

1894 ՆՈՅԵՄԲԵՐ 21

ՆՈՅԵՄԲԵՐ 9 (Հ. Տ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՎԱԶԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրուածները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագրները։

Յանուցմունք կընդունուին Հայերէն և Ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեզ գրողներից. — Հարստահարութիւններ ի վաճ. — Կոտորածներ Հայաստանի մէջ. — «Սբանտարտ»ի տուած տեղեկութիւնը. — Բ. Դրան հաղորդած պաշտօնական տեղեկութիւնը. — «Ֆիգարօ»ի յօդուածը Հայաստանի կոտորածների մասին. — Հայեր Եգիպտոս. — Հայեր ի Ռուսիա. — Հնդկաստանի Հայերը նիւն ժամանակ. — Յանուցմունքներ. — Բանասիրական (Դէպի Եգիպտոս)։

ՄԵԶ ԴՐՈՂՆԵՐԻՆ

Երբեմն մեզ գրողները կը հարցնեն թէ ինչո՞ւ իրենց ղրկած այս ինչ յօդուած կամ նամակ չհրատարակուեցաւ։ Անհնարին պատասխանել չէ կարելի, մեր ժամանակ չներելն ի թէեւ չհրատարակուելու պատճառները զանազան են ղրկուած գրուածներին համեմատ, բայց գլխաւոր պատճառներն ընդհանուր կերպով այստեղ նշանակելով, իւրաքանչիւրն իր ժամին իր պատասխան առած կը լինի։

Ի հարկէ մենք մեր խօսքը չենք ուղղեր այն մեծամիտների համար հիւանդ ուղեղ ունեցողներին որոնք կեղծ կարծում են թէ իրենց մէկ յօդուածը կոչկակարներէ կը բաղկանայ։

Հայոց եկեղեցին քաղաքի գեղեցիկ շէնքերէ մին է, արուեստներու պարտիզի մը մէջտեղ կանգնած. դիմացը կը գտնուի Առաջնորդարանը և վարժարանը որի արտաքին տեսքը նոյնպէս մխիթարական։

Ուրիշ տեղերէ միշտ գանգատներ կը լինին թէ վարժարանը խեղճ վիճակի մէջ է հաստատուն եկամուտ չունենալուն պատճառով. այստեղ ալ հակառակ երեւոյթը աւելի գէշ վիճակի մէջ գրած է վարժարանը։ Անոնք որ Եգիպտոսի (Ալեքսանդրիայի և Գահիրէի) ազգային վարժարանների վիճակին տեղեկութիւններ կը սպասեն այստեղ, փառք պիտի տան հաստատուն եկամուտ չունեցող ազգային հաստատութիւններին համար. այստեղ հաստատուն եկամուտը ակամայ կարծես թէ մեծ վնասին եղած է բարեկարգութեան. բարերարներու կատարած կալուածները, 10 հազար ոսկիի հասնող դրամագլուխը ուրիշ տեղ հայ գաղթականութիւններէն աւելի նախանձելի վիճակի մէջ չէ դրած Եգիպտոսի գաղթականութիւնը կրթական տեսակէտով։

Այդ հաստատուն եկամուտներու վրայ բազմաթիւ անհատական չահերի օգտակար չէնքեր կազմուած են. բարեկարգութեան խօսքը հանեցի՞ր, մէկէ աւելի խաչթողներ դուրս կը ցցուին. վարժապետի ընտրութեան մասին կրթական տեսակէտով չեայուիր, այլ Ֆավորիներ վարձատրելու. խանութի մէջ ծառայութեան ընթացք աւարտողն ալ յարմար վարժապետացու է։

Ալեքսանդրիոյ վարժարանի արական մասին մէջ կը գտնուին 15-18 տղայներ (միայն աղքատներ), ամենէն մեծը 12 տարեկան հասակի. աւելի ճիշտը, ժամանակ կանցունեն այնտեղ. ո՛չ հայերէն ուսուցանելու ջանք կը տարուի և ո՛չ ալ ուրիշ ուսումի համ լեզու։ Հայ տղայներէ անոնք որ կրնան, Ֆրէրներու վարժարանները կերթան և աշխարհաքաղաքացի կը պատրաստուին. չկրցողները մանուկ հասակէն գործի կ'երթան։ Լաւ ճայն ունեցող մի քանի աղքատ տղայներ ալ եկեղեցիի անուէկն նպաստ մընդունելով, քիչ մ'աւելի կը մնան եկեղեցական երգեցողութիւն սորվելու համար, պրծաւ գնաց։ 20ի չափ աղջիկներ ալ օրիորդական վարժարանը կը կազմեն։ Անոնց մասին տեղեկութիւններ չկրցայ առնել. կը մղձեմ որ արական սեռի դասընկերներէն աւելի բաղդաւոր լինին և իրենց վարժուհին աւելի անճնուէր եղած լինի։ Այս երկսեռ վարժարան ամսական 600 ֆրանգ կուլ կուտայ։

Գալով ժողովրդին, սա ձրի վարժարան մ'է որ կը տեսնէ. իրմէ դրամ ուզող չկայ, այդ կը բաւէ 3 4 տարին մի անգամ գինք կը կանչեն որ Թաղական խորհրդի համար քուէ տայ. ընտրելիների պատրաստած անուններն ալ մէկտեղ կը ղրկեն իրեն. ինքն ալ կուգայ և մեքենայօրէս քուէատուփը կը ձգէ իրեն յանձնուած ատեանը և ա՛լ անկէ ետք ուրիշ բանի չխառնուիր։ Սակայն այս ու այն անհիւն բամբասանքի նիւթ մ'ունենալու համար երբեմն երբեմն կը խօսուի վարժարանի վիճակի մասին. միայն կը խօսուի։ Հայ ձնողի իդէալն է արաբերէն և եւրոպական մի քանի լեզու սորված պաշտօնէացու զաւակ մ'ունենալը. այդ կրթութիւնն ալ կը յուսայ միսիոնարական վարժարաններէ, թէեւ ատոնք ոչ թէ ուսումի, այլ և լեզուի համար չատ հասարակ վարժարաններ են, բայց գիրենք կը շլացնէ եւրոպական անունը. մինչդեռ այս կողմ, ազգային պատրաստ դրամովը կարելի էր աւելի բարեկարգ և արդիւնաւոր վարժարան մը պահել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ

(Շար. 32րդ թուէն)

Քաղաքին մէջ յայտնի կերեւի մանաւանդ յոյն տարրի ազդեցութիւնը. վաճառատուններուն և շէնքերուն մեծ մասը յոյն կը հոտի։ Նախաձեռնութեան և մեծ ձեռնարկներուն մէջ Հրեաներ ալ Յոյներին հետ կը մրցին. Արաբն ալ ուրիշ կերպով իր գոյութիւնն կը պահէ, չարաչար կաշխատի, ղրկանքի և կեղտի մէջ կապրի ու կաճի։ Արաբական չուկաներուն մէջ Արաբի կինն ու 7-8 տարեկան մանուկներն ալ կաշխատին։ Այդ մանուկներուն վաստակը օրը մի քանի սանթիմ է. իրենց կերակրին ալ մի անուշ չկրնար արուիլ, աւելի իրենց վարպետներէն գաղանական մեծ կուտեն։ Արաբներէն չարքաշ և սակաւապէտ կեանքը բանուորի օրավարձը չատ ստորնացուցեր է այստեղ։

Հայերն ունին 1-2 վաճառականներ, մի քանի գործարանատէր մխահոտի. այնուհետեւ նիւթական աստիճանը յանկարծ կ'իջնէ և մնացած ատեաւր մեծամասնութիւնը փոքր խանութպաններէ, խանջիներ կամ քարողը աղուոր չէ կըբերեր տալ. մի ուրիշ տեղ վարժապետ ու հոգեբարձուն ծուռ աչքով երբար պատահեր են և ատոր համար «ասվարժապետը չենք ուզեր կուզենք»ի խնդիրը է ծագեր և այլն խնդիրներ որոնք կրնան և պէտք է կարգադրուին տեղին վրայ քան թէ Արեւելեան պէս մի լրագրի մէջ դուռ բանան երկու կողմէ երկար վիճաբանութիւններու։

Կարելի է գրել մի հայաբնակ տեղի բարոյական, կրթական, տնտեսական և այլն վիճակին վրայ, անձնական հաշիւներ կարգադրելէ տարբեր նպատակով։ Պէտք է խոստովանիլ սակայն որ մի ժողովրդի, մանաւանդ բարոյական վիճակին վրայ տեսութիւններ գրելը չատ դիւրին չէ. թափանցող սուր աչք պէտք է ունենալ, անոր հոգեբանական ներքին վիճակը դիտելու և ուսումնասիրելու համար։

Այլ սակայն եթէ ոչ այդպիսի տեսութիւնները և խորհրդածութիւնները՝ որոնց համար բաւական զարգացած միտք է հարկաւոր, կարելի է տեղական կեանքէն հաղորդել գէթ այնպիսի լուրեր և տեղեկութիւններ որոնք Արեւելեան ընթերցողներուն համար հետաքրքրական կարենան լինել և որոնք իմանալու և ստուգելու համար հետազօտութիւն, դիտելու աչք և ճշմարտութեան սէրը բաւական կրնան լինել։ Այդ կարգի գրուածները եթէ խնամեալ ոճով ալ հագուրդուած չինին, այնչափ հոգ չէ, խմբագրատան մէջ կը կոկուին անունք. միայն թէ երկարաբան չլինին։

Լուրեր և տեղեկութիւններ հաղորդող յօդուածները պէտք է որ անպատճառ ստորագրուած լինին գրողին անունովը. եթէ ոչ նշանակութիւն չարուիր։ Եթէ ուզուի, կեղծ անունով կամ առանց գրողի ստորագրութեան կը հրատարակուի Արեւելեան մէջ. բայց գրողը իր բուն անուն պէտք է իմացունէ խմբագրութեանս որ մենք վստահ լինինք գրողին վրայ։ Երբ մէկը, օրինակի համար, «ազգասէր», «Ոչառնի» և այլն անուններով կը հաղորդէ մեզ լուրեր ևիր բուն անուն չիմացուներ մեզ, ատով վստահութիւն չներշնչեր մեզ հրատարակելու համար։

Ազգային ընդհանուր վիճակին վրայ այնպիսի խորհրդածութիւններ, որոնք լուր չեն պարունակեր, այլ լոկ խորհրդածութիւններ են, կրնան ա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԱՐԱՆ

ՄԱՐՍԷՅԼ

Compagnie de Navigation Mixte

Service régulier entre Marseille et Alexandrie

Départ de Marseille le Samedi à midi

Départ d'Alexandrie le Mercredi à midi

Pour fret et passage s'adresser à MM. Fratelli Svoronos, Consignataires, Marseille, 2, Quai du Port.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Ա

ԵՐԵՎԱՆ — 1940

Հրատարակության է երաշխավորել Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության գործում մեծ նշանակություն ունեն ժամանակագրական տվյալները։ Ժամանակագրությունը պատմության ուղեկիցն է։ Առանց ժամանակագրության հնարավոր չէ ճշտորեն պատկերացնել պատմական զարգացման ընթացքը, պատմական երևույթների հաջորդականությունը, նրանց ներքին կապը։ Ժամանակագրությունը պատմական գիտության հենարանն է։

Ժամանակագրության հարցերով զբաղվել են հայ պատմագիրները դեռևս հին ժամանակներից։ Հայ պատմագրության հայրը՝ Մովսես Խորենացին, իր «Պատմության» մեջ հաճախ է անդրադառնում ժամանակագրական հարցերին։ Նա հայ ժամանակագրության հիմնադիրն է։ Նրա հետևորդներից շատերը ևս մեծ ուշադրություն են դարձրել ժամանակագրական հարցերին։ Ստեփանոս Տարոնեցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամվել Անեցին, Ստեփանոս Տարաղնեցին, Արիստակես Լաստիվերտցին, Մխիթար Այրիվանեցին, Գրիգոր Տաթևացին, Հովհաննես Թլկուրանցին, Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցին, Կիրակոս Գանձակեցին, Հովհաննես Երզնկացին, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Կաթողիկոս Կոլոթցին, Ստեփանոս Լեհացին, Հովհաննես Կաթողիկոս Օձնեցին, Գրիգոր Մագիստրոսը, Ստեփանոս Ասողիկը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Հեթում Պատմիչը

Զօրքերի հրացանաձգութիւնը դադրեցաւ այն ժամանակ միայն երբ 25 գիւղ քանդուած և մի քանի հազար մարդիկ կոտորուած էին ։

«Անգլիական հիւպատոսը նոյն տեղ գնաց և մի տեղեկագիր չինեց որ կ. պոլսի անգլիական դեսպանին միջոցով հաղորդուեցաւ Սուլթանին ։ Սուլթանը զայրանալով մի տեղեկագիր պատհանձեց Չէբի փաշային ։ Բաղէշի նահանգապետը տեսնելով որ ինք յանցաւոր պիտի ելնէ, ամբաստանեց անգլիական հիւպատոսը, ըսելով թէ նա ժողովրդին դրգռած է տեղականիշխանութեան դէմ ապստամբելով տուրք չվճարելու և հետեւապէս նա է պատասխանատու պատահածներին համար ։ Այժմ անգլիական դեսպանատան կողմէն յատուկ մի պաշտօնեայ ղրկուած է կռուին տեղը, այդ ամբաստանութիւն քննելու համար ։»

Բ. ԴՐԱՆ ՀԱՂՈՐԴԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ

Լոնտոնի օսմանեան դեսպանատունը պաշտօնական տեղեկութիւն հաղորդելով լրագիրներուն, հետեւեալ կերպով կը պատմէ Հայաստանի մէջ եղած վերջրեալ կոտորածները ։

«Հայ աւազակները արտասահմանէ առնուած զէնքերով զինուած, մի ապստամբ քիւրտ ցեղի հետ միացեր էին կողոպտելու համար ։ Ատոնք կողոպտեցին, քանդեցին մահմետական գիւղերը և բնակիչները ողջ ողջ այրեցին ։

«Երկրին հանդարտ բնակիչները պաշտպանելու համար կանոնաւոր զօրքեր ղրկուեցան որոնք խաղաղութիւնը վերահաստատեցին և ամենքն ալ դոհ եղան ։ Զօրքերը ոչինչ կողոպտած չեն բնաւ ։ Ընդհակառակ, իրենք աւազակ Հայերն էին որ ամեն բան կողոպտած էին, իրենց անգթութիւնները գործադրելու սկսելէն առաջ ։»

Եթէ նիւթը ողբերգական չլինէր, ընթերցողի ծիծաղը պիտի չարժէր անշուշտ օսմանեան կառավարութեան կողմէն եւրոպական լրագիրներուն հաղորդուած այդ պաշտօնական տեղեկութեան վրայ։ Մէկ ժամանակ օսմանեան կառավարութիւնը ընդունած էր թէ Հայերը կը հարստահարուին Հայաստանի մէջ և Պէրլինի վեհաժողովին մէջ իր ստորագրութեան տակ այդ խոստովանելով, խոստացած էր անյապաղ բարենորոգումներ մտցնել Հայաբնակ նահանգներուն մէջ։ Այդ բարենորոգումներ 16 տարիներէ ի վեր զանազան պատրուակներով չգործադրուելէ յետոյ, այս էր պակաս մնացեր որ Բ. Դուռը ելնէ այժմ ալ յայտարարէ եւրոպայի առջեւ թէ Հայերը չեն Թիւրքիոյ մէջ հարստահարուողները, այլ իրենք Հայերն են որ կը հարստահարեն խեղճ Թիւրքերին և եւրոպական զէնքերով սպառազինուած կը լմնցնեն ուկսպաննեն մահմետական պիւղացիները... ։

Ճշմարտութիւնը բացարձակապէս ուրանալու և խեղաթիւրելու համար եւրոպայի առջեւ Բ. Դրան ցոյց տուած այս աստիճանի յանդգնութեանը վրայ մարդ կը չուարի թէ զարմանա՞յ ուելի թէ զայրանայ ։

Երբ ոչ միայն Հայեր, այլ և եւրոպական թերթերի թղթակիցները, այլ և եւրոպական տէրութիւնների հիւպատոսները, այլ և կոյր չեղող ամեն մարդ որ Թիւրքիա գնացած է, միաբերան կը հաստատեն Հայերի հարստահարութիւը Թիւրքիոյ մէջ, Սուլթան Համիտի կառավարութիւնը բռնական յանդգնութիւն պէտք է ունենայ որ եւրոպայի առջեւ ելնէ յայտարարէ թէ Հայերը կը հարստահարեն, կը կողոպտեն, կը սպաննեն մահմետական գիւղացիներին և թէ ինք ստիպուած է իր զօրքերով պաշտպանել խեղճ մահմետականները Հայերի հարստահարութիւններին ու վայրագութիւններին դէմ ։

Արդեօք սա մի ծաղր և հեգնութիւն չէ՞ Բ. Դրան կողմէն քրիստոնեայ եւրոպային որ իբր թէ կը պաշտպանէ Հայաստանի քրիստոնեայները մոլեռանդ մահմետականների հալածանքներուն ու հարստահարութիւններուն դէմ ։

ՁԻՆԱՔՈՒԻ ՁՕԴՈՒԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆիկարօ լրագիրը նոյ. 18ի թուին մէջ իր խմբագիրներէ մէկին ստորագրութեամբը հետեւեալ յօդուածը կ՚հրատարակած ։

Եթէ Պր. Կլատսթոնի դէռ այն կռուող մարդը լինէր ինչ որ էր 20 տարի յառաջ, մի չատ յարմար և տխուր առիթ պիտի ունենար մի նոր բանակիւ բանալու Պուլկարների կոտորածներուն դէմ բացած կռուին նման որ նպաստեց 1878ի ռուս-թրքական պատերազմին ։ «Հայկական Հայրենասիրաց ընկերակցութիւն»ը որի կեդրոնը Լոնտոն է, Անգլիաի արտաքին գործերի նախարար Լորտ Բըմպըրլէյին մի չարք եղելութիւններ մի տեղեկագիր ներկայացուցեր է որոնք քաղաքակիրթ աշխարհին ամօթ և նախատինք կը բերեն ։ Այդ եղելութիւններ կատարուեր են անցած ամսի սկիզբը, մի այնպիսի տեղ որ Աբտաքին գործերի պաշտօնատան մտուցուած նամակներուն մէջ չատ որոշ կերպով նշանակուած չէ, բայց կերեւի թէ Բաղէշի և Մուշի մէջ տեղերը լինելու է, այսինքն վանի լճին մօտ, կարելիէն ոչ չատ հեռու, լեռնային մի երկրի մէջ որ տարածուած է Սեւ ծովին և Միջագետքին մէջտեղ (այս ծանօթութիւններ տալով, յատկնութիւն չունիմ բնաւ աշխարհագրական ամենաճիշդ տեղեկութիւններ տուած լինելու. միայն թէ ընթերցողներս իրենց տեղէն ելնելով երթալ աշխարհագրական քարտէսին վրայ վճռանալու նեղութենէն ազատած կը լինիմ) ։ (1)

(1) Մեր հայ ընթերցողներ հասկցան անշուշտ որ Սասունի և անոր սահմանակից Մուշի դաշտին համար է խօսքը ։

ԽՄԲ. ԱՐՄ.

Գարշելի բաներ կատարուեր են որոնց սկզբնապատճառն եղեր է տարուերների յափշտակութիւը. 6,000 կնիկ բռնաբարուեր և սպաննուեր են. մինակ մի թիւրք զօրք հարիւր հատէն ոչ պակաս բռնաբարեր է եղեր! (եթէ ներելի լինէր մի այսպիսի տխուր նիւթի մասին ծիծաղիլ, կրնար մարդու ծիծաղը չարժելով չափազանցութիւն համարուիլ. ժամանակ ալ գտեր են, թէեւ կոտորածը երեք օր տեւեր է) ։ Մի ուրիշ գիւղի մէջ որի անունը տրուած չէ, կիները փակեր են մի եկեղեցիի մէջ ուր ողջ ողջ այրեր են զանոնք. իսկ դուրս փախչիլ ուզողները սուինի հարուածներով ջրեր են կրակին մէջ ։ Քանի կամ երեսուն գիւղի մէջ գտնուած բոլոր բնակիչները, մարդ կին տղայ, ամենքն ալ սրէ անցուցեր կոտորեր են որովհետեւ չեն համաձայնուեր քրիստոնէական կրօնքըն ուրանալ ։

Կարդալով այս նկարագրութիւնները, որոնց մէջ ամեն բան մանրամասնօրէն տեղնուտեղը պատմուած չէ, կը կրկնեմ թէ մարդ կը դժուարանայ հաւատալու ատոնց ճշդութեան, այլ սակայն պէտք է որ ճիշդ լինին որովհետեւ երբ մէկ կողմէն Հայեր կասեն թէ յանցաւորները կանոնաւոր թիւրք զօրքերն են, միւս կողմէ թիւրք կառավարութիւնն ալ կասէ թէ յանցաւորները քիւրտ աւազակներն են (1) և կ.պոլսէն մի հեռագիր կհմացունէ թէ Սուլթանը մի քննիչ յանձնաժողով պիտի ղրկէ կոտորածին տեղը ։ Թէ ի՞նչ պիտի կրնայ անել յանձնաժողովը, այդ տարակուսելի է. եթէ լինէինք դէռ այն ժամանակի մէջ որ մի եւրոպա կար, անշուշտ իբարանցում պիտի պատճառէին այս եղելութիւնները որովհետեւ կոտորուողները քրիստոնեայներ են և կար ժամանակ որ ամբողջ աշխարհի քրիստոնեաները ծերունի եւրոպան պաշտպանեալներն էին ։ Բայց ծերունի եւրոպան այժմ ուրիշ զբաղումներ ունի և հոն ուր մի այսպիսի դէպքի համար զօրքեր կը ղրկուէին ասկէ յիսուն տարի առաջ, այժմ մի դիւանագիտական յանուցագիր ղրկելով կը բաւականանան ։ Հետեւապէս, մինչեւ որ գործակալութիւնները հաղորդեն մեզ պաշտօնական հերքումները որի հարկէ կը փութան հրատարակել, անկախ հրապարակագրին կը մնայ միայն փոքր Ասիոյ մէջ կատարուած այդ վայրագութիւնները հրատարակելու ախտը պարտքը և մեր ժամանակի թուլութիւնն ու անզօրութիւնը մի անգամ եւս ապացուցանելու աննշան գոհունակութիւնը ։

ՀԱՑԵՐ ՑԵԳԻՊՏՈՍ

Գահիրէի Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ հոկտ. 26/7 նոյ.ին հոգեհանդստի պաշտօն և պատարագ մատուցուեր է Ռուսիոյ հանդուցեալ կայսր Ալէքսանդր Գ ի համար ։ Պատարագիչն էր Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեան։ Պատարագին մինչեւ վերջը եկեղեցին ներկայ գտնուած են ռուսական հիւպատոսն ու դեր հիւպատոսը, Տիգրան փաշա Ապրօեան, տեղական Ազգային վարչութեան անդամները, Բարեգործական ընկերութեան վարչական խորհրդի բոլոր անդամները և Հայերի ու օտարազգիներուն խուռն բազմութիւն ։

Յատկապէս պատրաստուած մի մահարեմի վրայ որ սեւերով պատած և ծաղիկներով զարդարուած էր, 3 չքեղ պսակներ դրուած էին Եգիպտոսի Հայ գաղթականութեան, ռուսահպատակ Հայերին և «Հայոց Բարեգործական ընկերութեան» կողմէն նուիրուած ։

Պրն. Հիւպատոսը պատարագէն վերջ Առաջնորդարան երթալով, իր շնորհակալութիւնները յայտներ է Հայ գաղթականութեան ներկայացուցիչներին ։

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Թէոդոսիայի Ղազարոս Յակոբեան Պէրպէրեանց անուն անձը որ մի քանի ամիս առաջ մեռած է, իր հարստութիւն, 150,000 րուբլի, կտակած է եղեր Խրիմի Հայերի կրթութեան գործին ։

—Նոր Ձեռնադրուած եպիսկոպոսներէն Գեր. Մակար Բարխուդարեանը Շամախիի Առաջնորդ նշանակուած լինելով, էջմիածնէն ուղեւորեր է իր նոր պաշտօնատեղ ։

— Բագուի վաճառականներէն Պ. Եղիա Եղիազարեան իր մեռած եղբօր յիշատակին համար 5000 րուբլի նուիրեր է բարեգործական նպատակի ։

— Բագուի բնակիչ Պ. Մելիքեանը Ս. Էջմիածին այցելութեան երթալով, 2400 րուբլի նուիրեր է Էջմիածնի թանգարանին և այլ մասերին համար ։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՑԵՐԸ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿ

Պետերբուրգի «Նովոյէ Վրեմիա» լրագիրը՝ հայ լրագրութեան հարիւրամեակին և «Ազդարար» անդրանիկ հայ լրագրին Հնդկաստանի մէջ երեւցած լինելուն առիթով գրած է նաեւ հետեւեալը.

«Հայերէն լրագրութեան առաջին անգամ հեռաւոր Հնդկաստանի մէջ սկսած լինելուն պատճառը կը բացատրուի անով որ ԺԸ դարի վերջին կէսին՝ Հնդկաստանի Հայերը նիւթական մեծ միջոցներ ունէին, Արեւելքի և Եւրոպայի հետ եղած բոլոր վաճառականութիւնն իրենց ձեռք անցնելով ։ Այդ Հայեր, ի միջի այլոց, Ռասիսի Եկատերինա Բ կայսրուհիին դիմած և խնդրած էին որ Հայաստանը մահմետականների լծէն ազատելով Հայաստանի թագաւորութիւնը վերա-

հաստատել Ռուսիոյ գերիչխանութեանը տակ։ Ա.հագին հարստութիւն ունեցող երկու Հայեր իրենց հսկայ միլիոններ առաջարկած էին ռուս կառավարութեան այդ գործ յայտնելու համար։»

ԾԱԽՈՒՑ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիոյ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու ֆոստի ծախքը։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

Բ. Յ. Վարդանեանց. ԴԱՑԼԱՑԼԻԿ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ
(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ դիւզացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականների գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լըժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեան առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նթէ ընթերցողների հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը մնի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 Թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաժալ դիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմեար, տպուած 70 × 45 սանտիմեար քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներըը իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 րբլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ռսկ. կամ 2 փր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գինն՝ ճանապարհածախսով՝ րբլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու գիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիոյ խմբագրութեան։

ՀԱՑՈՑ ՀԱՑԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր Հայ հրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանգով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ փափաք կունենան Արմենիոյ միջոցով մէկի դիմումը անել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիոյ հակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկթագրի (գլխագիր) համար 2 սանտիմ և 1 բոլորգրի համար 1 սանտիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակ Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒԻՆԵԱՆ ՍԸՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սըրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած դիներովը։

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՑԻՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներէն պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՈՊ — ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց պատրեստ (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ապատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԵՐԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ՓԻՒՐՓԻԱԻ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղագրական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին քաղաքական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի թիւերը սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ութսնամեայ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկերը կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՅԱՐԻՈ (Բունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն ներքեն մի փոքրիկ պատկերը կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՏՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ։ Բոլոր նմոյշները զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրարև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ
(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)
ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ է վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷԼ
Հայերեն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.